Արձանագրություն N 2

Վայոց ձորի մարզային հիվանդանոցի և Արագածոտնի մարզի «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» «Մարտի» 2024թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Ա.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Խուրշուդյան)

Ընդունել ի գիտություն, որ 09.02.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի փետրվարի 26-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի փետրվարի 27-ին ժամը 11:00-ին: 2024 թվականի փետրվարի 28-ին ժամը 11:15-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Աննարկա» ՍՊԸ	rima.nazaretyan@annarka.am	02656691
2	«ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ	info@amamed.am	01332401
3	«Դիավանտ» ՍՊԸ	lawyer@diavant.am	00255375
4	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	tenders@margpharma.com	00842845
5	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
6	«Պրոֆտեստ» ՍՊԸ	sedakochar@gmail.com	00120301

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Խուրշուդյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը 01.03.2024թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակցին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ

համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումը.

«Աննարկա» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Ինչպես նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքի համար նշել հստակ երաշխիքային ժամկետները և որակի վկայականները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Խուրշուդյան)

Շտկման համար սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էր մասնակցի կողմից ներկայացված պահանջված շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Գնահատող հանձնաժողովը գնահատելով շտկված փաստաթուղթը գնահատեց «Աննարկա» ՍՊԸ-ի հայտը:

Որոշվեց. «Աննարկա» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Խուրշուդյան)

27.02.2024թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Խուրշուդյան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները.

1. 16.02.2024թ. «Խնդրում ենք տալ պարզաբանում 1. Հավաքածուն ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերն ու պարագաները սարքավորման լիարժեք գործունեության համար և անձնակազմի պաշտպանության համար անհրաժեշտ անվտանգության պարագաներ (օրինակ՝ մալուխներ, տեղադրման նյութեր, մեկուսիչ նյութեր և այլն) – խնդրում ենք տալ բացվածք , թե ի՞նչ հավելյալ պարագաներ են ներառված << և այլն>> -ի մեջ, քանի որ այս չափորոշիչը

յուրաքանչյուր անձի կողմից կարող է պարզաբանվել տարբեր ձևի: 2. Այս հետևյալ չափորոշիչները ՝ <<Հավաքածուն ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերն ու պարագաները սարքավորման լիարժեք գործունեության համար և անձնակազմի պաշտպանության համար անհրաժեշտ անվտանգության պարագաներ (օրինակ՝ մալուխներ, տեղադրման նյութեր, մեկուսիչ նյութեր և այլն)>>, <<Մոնտաժային նյութերի, մալուխների առկայություն անհրաժեշտ համակարգի տեղադրման համար>>, <<Անխափան սնուցման աղբյուրից (UPS) մինչև ռենտգենյան սարքավորում եռաֆազ հոսանքի սնուցման մալուխի առկայություն (մինչև 30 մետր) և այդ մալուխի անցկացման ու մոնտաժման համար բոլոր պարագաների առկայություն>> միանման են և մոլորեցնող: Խնդրում ենք ընդհանրացնել և հստակ նշել, թե՞ քանի մետր մալուխ է անհրաժեշտ համակարգի միացման համար: 3. << Մրցույթին մասնակից բոլոր ընկերությունները պետք է տրամադրեն ապրանքի տվյալների թերթիկներ, որոնք հաստատում են տեխնիկական բնութագրերը: Համապատասխանության հայտարարությունը պետք է լրացվի խիստ մրցույթում նշված վերնագրի ներքո: Համապատասխանության հայտարարության մեջ հաստատված յուրաքանչյուր հստակեցում պետք է նշի էջի համարը, որտեղ այն նշված է ապրանքի տվյալների թերթիկում: Թերի լրացված տեղեկատվությունը չի դիտարկվի:>> Հարգելի գործընկեր, հասկանում ենք, որ տեխնիկական բնութագիրը վերցված է ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից Մարտունու ԲԿ-ի համար գնման մրցույթից և այնտեղ այս պահանջի առկայությունը թելադրված էր համաձայն գնման գործընթացի պայմանների (ոչ ՀՀ գնումների մասին օրենք): Ուստի,պարզաբանեք խնդրեմ ինչո՞վ է պայմանավորված վերը նշված չափորոշիչի առկայությունը այս մրցույթում, որ նույնիսկ այս փաստաթղթի (որպես օրինակ) առկայությունը չի ապահովված հրավերի փաթեթում:» **22.02.2024թ. ներկայացվել է պարզաբանում՝** «Հարգելի մասնակիցներ: Ի պատասխան ներկայացրած հարցումներին տրամադրում ենք պարզաբանումներ: 1.«Բոլոր այն սարքերն ու պարագաները որոնք անհրաժեշտ կլինեն հայտով առաջարկվող կոնկրետ սարքավորման տեղադրման, մոնտաժման, գործարկման և աշխատանքը ապահովելու համար:» 2. «Ինչպես արդեն նշված է կպահանջվի առավելագույնը 30 մետր մալուխ:» 3. «Հրավերով սահմանված է, որ Մասնակիցների կողմից պետք է ներկայացվի տեղեկատվություն ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ (ապրանքի նկարագիր), իսկ պայմանագրի կատարման փուլում՝ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ: << Մրցույթին մասնակից բոլոր ընկերությունները պետք է տրամադրեն ապրանքի տվյալների թերթիկներ, որոնք հաստատում են տեխնիկական բնութագրերը: Համապատասխանության հայտարարությունը պետք է լրացվի խիստ մրցույթում նշված վերնագրի ներքո: Համապատասխանության հայտարարության մեջ հաստատված յուրաքանչյուր հստակեցում պետք է նշի էջի համարը, որտեղ այն նշված է ապրանքի տվյալների թերթիկում: Թերի լրացված տեղեկատվությունը չի դիտարկվի:>> դրույթով պահանջվող տեղեկատվությունը դիտարկվում է երաշխիքային նամակի բովանդակության մեջ:»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Խուրշուդյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Աննարկա» ՍՊԸ-ն՝ 208,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Մերժել ոչ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը՝ «Թեոֆարմա Իմպորտ», «Մարգ Ֆարմացիա», «Դիավանտ», «Պրոֆտեստ» և «ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ-ների՝ ներկայացված գնային

առաջարկները գնման գինը գերազանցելու պատճառով՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ մասի:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.03.2024թ.-ից մինչև 21.03.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

---------- Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի և Թալինի ԲԿ հագեցման համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 27.02.2024թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		«Աննարկա» ՍՊԸ					«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	տոմոգրաֆիկ սարքեր	33111460/501	2	164,000,000	328,000,000	208,000,000.00	0.00	208,000,000.00	104,000,000.00	104,000,000.00	211,725,000.00	0.00	211,725,000.00	105,862,500.00	105,862,500.00

Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի և Թալինի ԲԿ հագեցման համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 27.02.2024թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ					«Դիավանտ» ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	տոմոգրաֆիկ սարքեր	33111460/501	2	164,000,000	328,000,000	235,600,000.00	0.00	235,600,000.00	117,800,000.00	117,800,000.00	327,500,000.00	0.00	327,500,000.00	163,750,000.00	163,750,000.00

Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի և Թալինի ԲԿ հագեցման համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 27.02.2024թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		«Պրոֆտեստ» ՍՊԸ					«ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	տոմոգրաֆիկ սարքեր	33111460/501	2	164,000,000	328,000,000	327,998,000.00	0.00	327,998,000.00	163,999,000.00	163,999,000.00	327,999,990.00	0.00	327,999,990.00	163,999,995.00	163,999,995.00